ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ՀԱՐՑԱՇԱՐԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

9-րդ դասարան

1. Հրանտ Մաթևոսյանը 20-րդ դարի հայ արձակի ամենաինքնատիպ գրողներից է, որ գրականություն բերեց բոլորովին նոր մտածողություն, նոր կերպարներ, ստեղծեց մարդու և կենդանու մտերմության մի նոր ասք, ստեղծեց իր աշխարհը, որը չի շփոթվում ուրիշ որևէ գրողի աշխարհի հետ, այդ աշխարհը անվանեց « Ծմակուտ» և դարձավ այդ աշխարհի և՛ բնակիչը, և՛ խնկարկուն: Այս իսկ պատճառով նրան բնութագրում են Ծմակուտի քուրմ շրջասույթով:

«Կանաչ դաշտը» կանաչ հովտի մայրամուտի և կրկին կանաչելուշարունակականության հրաշալի պատմություն է իր քուռակին չար ուժերից պաշտպանող, ապրելու իր իրավունքը պայքարով հաստատող պառավ Կարմիր ձիու և «եղյամի հատիկների նման աստղիկներով» քուռակի մասին:

Այն ամփոփված է «Մեր վազքը» պատանեկան գրքում: Կանաչ հովտի դրաման ներկայացնելու համար հեղինակը դիմել է իր նախընտրած Ասքի պատումային եղանակին, որի ասացող-դերակատարը այն հեռավոր օրերի ականատեսն ու վկան է, ով հրաշալի ծանոթ է «կենդանական բարքերին» և կրում է բնության շունչը: հովիվը հիշում է հովտի՝ ժայռերին բախվող կայծակների և նրանց հետ հովիտ մտնող վտանգի շունչը: Կարմիր ձիու և աստղազարդ քուռակի մոր-զավակային սրտառուչ փոխհարաբերությունը: Մոր անհանգստությունը և քուռակի երջանիկ անտեղյակությունը: «Կանաչ հովտի մեջ այդպես անշարջ կանգնած էին ժայռը, կաղնին, մասրենին »՝ յուրաքանչյուրը ապրում էր իր կյանքը, իսկ «կարմիր պառավ ձին զայրույթից դողում էր: Երբեք, ոչ մի անգամ հովիտն այդպես չէր դավաճանել ձիուն »: Հայտնվում է իր ձագերի համար կյանքի գնով կեր հաթայթող գայլը, Վտանգված է քուռակի կյանքը, ձին կապված է, իսկ վտանգը նրա դնչի տակ է: Քուռակն անտեղյակ է վտանգին: Հովիտը դաժանորեն լուռ է, իսկ մայր ձիու և մայր գայլի մենամարտը պայքար է հանուն իրենց գենի հարատևման: Վրա է հասնում անհրաժեշտ օգնությունը. հովվական գամփռ շների և գայլի պայքարը, գայլի փախուստը, ձիու մահը: Հոցտի կենտրոնում մնում է սև շրջանակը՝ մեռած ձիու մարնով, իսկ հովիտը ամբողջովին կանաչ է: Հետո կրկին ճայթում է կայծակը, հովիտը լցվում է կայծակներով, օտար ձայներով, վտանգով, քուռակին իր ապաստարանն է կանչում կարմիր պառավ ձին: Ամեն ինչ սկսվում է նոչից: Ձիու կմախքի արանքներից ծլարձակում է կանաչը, հովտում արաձում է« աստղազարդ մի ձի՝ ետևիաջ ոտքի սրունքը սպիտակ……. ճակատին՝ սպիտակ աստղաձաղիկ և նրա աչքերի մեջ աարտացոլվում են ժայռը, կաղնին, ծաղկած մասրենին, կանաչ հովիտը և կապույտ երկնքի սպիտակ ամպերը»: Պատումը վերջանում է նույն պատկերով.«Կայծակը պայթյունով բախվեց որձաքարե ժայռին….», այսինքն՝ քուռակը վերհիշում է ամեն ինչ: Կյանքը շարունակվում է ինչպես միշտ, քուռակին կանչում է կարմիր պառավ ձին՝ դեպի իր մանկություն, դեպի սկիզբ, դեպի կայծակներով լցված հովիտ:

2. Միջնադարյան հարուստ գրականության մեջ իր անուրանալի տեղն ունի հանճարեղ մտածող, բանաստեղծ, մեծ գիտնական Ներսես Շնորհալին։ Նա սերում էր, Պահլավունիների նշանավոր տոհմից,որդին էր իշխան Ապիրատ Պահլավունու, ով Գրիգոր Մագիստրոսի երկրորդ աղջկա որդին էր, ուստի բանաստեղծը իր պապի՝ Գրիգոր Մագիստրոսի արժանավոր թոռն էր, XII դարի հայոց կաթողիկոս Գրիգոր Գ Պահլավունու եղբայրը։Ներսես Շնորհալին հայրապետական աթոռին գահակալում է 1166-1173 թվականներին՝ հաջորդելով եղբորը։Շնորհալի պատվանունը տրվել է Շուղրի և Կարմիր վանքի սաներին, բայց նրան կոչել են նաև Ներսես Դ Կլայեցի, Երգեցող։ Հայտնի է նաև Հայկ Խաչատրյանի գրառումը, ըստ որի՝ նրա եղբայրը՝ Գրիգոր Գ կաթողիկոսը երազում տեսնում է, որ Ներսեսը բարձրացել է Մասիսի գագաթը։ Նա խնդրում է եղբորը՝իջնել, երբ հայտնվում է երկնային հրեշտակը և հայտնում, որ նա Աստծո ցանկությամբ է սարը բարձրացել, և մարդիկ նրան այսուհետ Շնորհալի են կոչելու, որ նշանակում է քանքարաշատ, հանճարեղ, աստվածատուր շնորհով օժտված։
Այս երազից հետո կաթողիկոսը պերճ օրհնաբանությամբ իր եղբորը կոչեց Շնորհալի։
Իր հանճարի շնորհիվ նա դարձավ միջնադարյան գրականության նորարներից մեկը. նրա անվան հետ է կապվում հանելուկի՝ որպես գրական առանձին տեսակի մշակումը, կատարելագործումը և դասագրքերում զետեղելը՝ իբրև խրատական ու դաստիարակչական դաս։ նա հանելուկների նյութ է դարձրել տարվա եղանակները, մրգերի տեսակները,երկնային մարմինները, կենդանական աշխարհը, մտավոր կյանքը՝ նպատակ ունենալով նպաստել երեխաների աշխարհաճանաչողությանը, մտավոր զարգացմանը։ Շնորհալին առաջինն էգրել չափածո պատմություն, պատմական ողբ, չափածո ներբողյան, ուղերձ ու մաղթանք, չափածո խրատներ։ Նրա առավել հայտնի ստեղծագործություններից են «Առավոտ լուսոյ » շարականը«, որի տներն սկսվում են հայոց այբուբենի հաջորդական տառերով,«Նորահրաշ պսակավոր» շարականը՝ ստեղծված Եղիշեի «Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմի» մատյանի հերոսականությամբ, «Ողբ Եդեսիոյ» պատմական- հայրենասիրական պոեմը, «Յիսուս Որդի » պոեմը,«Հավատով խոստովանիմ» աղոթքը, «Թուղթ ընդհանրական» բարոյախոսական նամակը՝ ուղղված հայ ժողովրդին և այլ անկրկների գործեր։
Մասնակիցը կարող է իր ընտրությամբ ներկայացնել որևէ հատված։

3. Հայ գրականության անգնահատելի գանձերից է հայրենը, որը, որպես բանաստեղծական տեսակ, ձևավորվել է 10-12-րդ դարերից սկսած՝ և՛ որպես անհատական ստեղծագործություն, և՛ որպես ժողովրդական բանահյուսություն։ Միջնադարյան ժողովրդագուսանական քնարերգության մեջ հայրենի կարգով ստեղծվել են քառատող երգեր, որոնք կոչվել են հայրեններ։ Սրանք 7/8 բաժանումով 15-վանկանի ոտանավորներ են, որոնք երգվել են խնջույքներում և հարսանիքներում, հայրենները կոչվել են նաև անտունիներ, որոնց հայրենիքը եղել է Վանը, Ակնը, Խարբերդը։ «Հայրեն» եզրույթը վկայվել է ոչ միայն «հայերեն», այլև «հայրենի»,«հայրենիք» ձևերով։ Անվանի գրականագետ Արշակ Չոպանյանը այն բացատրում է այսպես.«Քուչակի«հայերեն ասա» -ն ըսել կուզե թե այդ երգերը հղացված են հայկական ոճով և հայկական երաժշտությամբ»։ Այս բացատրությանը համամիտ է նաև Մանուկ Աբեղյանը։ Հայրենների առաջին օրինակները հանդիպում ենք Գրիգոր Նարեկացու մոտ, այնուհետև այն բուռն զարգացում է ապրում 14-16- րդ դարերում։ Հայրեններ գրել են

Ներսես Շնորհալին, Հովհաննես և Կոնստանդին Երզնկացիները, Ֆրիկը։ Միջնադարից մեզ են հասել 500-ին մոտ հայրեններ, որոնց մեծ մասը վերագրվում է 16-րդ դարի բանաստեղծ Նահապետ Քուչակին, որը ծնվել և ապրել է Վանի Խառակոնիս գյուղում։ Հայրենները գրվել են հիմնականում սիրո, պանդխտության և խոհափիլիսոփայական թեմաներով։ Սիրո հայրեններում եարը կամ յարուկը ներկայանում է իր ամբողջ գեղեցկությամբ, իր մարմնական բարեմասնություններով, առանց այլաբանության, քանի այն կյանքի հիմքն է, սերը հավատ է, ապրելու նպատակ։ Հրաշալի են Նահապետ Քուչակի սիրո հայրենները՝«Երբ սէրն ի յաշխարհ եկաւ», «Ես աչք ու դու լոյս, հոգի», «Ես այն հաւերուն էի»,«Եկին ու խապար բերին» և այլ հրաշալի հայրեններ, որտեղ սիրո փառաբանությունն ու տառապանքը պատկերվում են դիպուկ մակդիրներով, համեմատություններով, բանաստեղծական յուրահատուկ պատկերներով։ Պանդխտության հայրեններից ավելի հայտնի են «Զիմ եարն ամանաթ կուտամ», «ժամ- ժան զիմ դարիպութիւնս»,«Ես շեւթէլի մորճ մ՚էի» և այլն։ Մասնակիցը իր ընտրությամբ կարող է ներկայացնել ցանկացած հայրեն։

4. Միջնադարի հանճարեղ սիրերգակ, մեծ մտածող, «Գողթան երգիչների չափ ազգային», ինքն իրեն «խալխի նոքար» հռչակած «մեծ Բեզարածն» ու «մեծ Ըղձավորը» ծնվել է 1722-ին, արվեստների ու արհեստների քաղաք հռչակված Թիֆլիսում, մահտեսի Կարապետի և սանահինցի Սառայի ընտանիքում։ Սայաթ- Նովայի իսկական անուն- ազգանունը Արութին Սայադյան է, իսկ Սայաթ- նովա նշանակում է Որսկանի թոռ կամ երգի որսորդ. սայյադ՝ որսկան, ձկնորս, նովա՝ երգ։ Այս աշուղական մականվամբ էլ ստեղծագործում ու ապրում է մեծ բանաստեղծը։ Սայաթ- Նովայի առաջին կենսագիր Գևորգ Ախվերդյանի շնորհիվ մեզ է հասել բանաստեղծի «Դավթարը, նաև ժողովրդից գրի առնված ավանդությունները, որոնցից տեղեկանում ենք նրա կրթության մասին, որը սահմանափակվել է գրաճանաչությամբ և այն տարրական գիտելիքների յուրացմամբ, որը կարող էր ստանալ ընտանիքում կամ Թիֆլիսի հայոց որևէ դպրատներից մեկում։ Հետագայում նա իր գիտելիքները հարստացրել է ինքնակրթությամբ, իսկ աշուղական արվեստի գաղտնիքները՝ վարպետ- ուսուցչի մոտ։ Նա 15 տարեկանում գերի է տարվել և մինչև 19 տարեկանը դեգերել Պարսկաստանում ու Հնդկաստանում, այնուհետև փրկագնվել վրաց արքայազն Հերակլի կողմից և դարձել վրացական արքունիքի երգիչ- երաժիշտ։ Նրա ճակատագրական սերն է դառնում արքայադուստր և արքայաքույր Աննա Բատոնաշվիլին, որի պատճառով էլ երկիցս արտաքսվում է արքունիքից. երկրորդ անգամ (1759) ոչ միայն վերջնականապես են վտարել, այլև բռնի ձեռնադրել են քահանա և զրկել երգելու իրավունքից՝ վտարելով Վրաստանից։

1795 թվականին հանճարեղ երգիչը նահատակվում է իր հայրենի քաղաք ներխուժած Աղա Մահմեդ խանի հրոսակների կողմից, երբ շտապել էր պաշտպանելու իր քաղաքը պարսիկ ջարդարարներից։ Նա ժողովրդի կողքին էր ինչպես միշտ, ապաստանել էր եկեղեցում և նրա հետ էլ սպանվում է։ Նրա մարմինն ամփոփվում է Սուրբ Գևորգ եկեղեցու բակում և «մոռացվում»։ Միայն 1914-ին ամենայն հայոց բանաստեղծի և տաղանդավոր նկարիչ Գևորգ Բաշինջաղյանի ջանքերով Թիֆլիսի հայ հասարակության հանգանանականությամբ մահարձան է կանգնեցվում հանճարեղ երգչի գերեզմանին։ Երախտապարտ ու սայաթնովայասեր հասարակությունը կարմիր վարդերով ծածկեց վարդի ու սիրո երգչի

գերեզմանը և հիմք դրվեց սայաթնովվյան Վարդատոնին։ Ամեն տարի այս համաժողովրդական տոնը նշվում է մայիսին, և երախտապարտ սերունդները երկյուղածությամբ երդվում են. «Գիր սիրել, ղալամ սիրել, դավթար սիրել», որպեսզի փարատեն անզուգական հանճարի դառնությամբ ասված խոսքերը. «Ամեն մարդ չի կանա խմի՝ իմ ջուրն ո՛ւրիշ ջրրեն է, Ամեն մարդ չի կանա կարդա՝ իմ գիրքն ո՛ւրիշ գրրեն է» և հաստատի, որ բանաստեղծի ջուրն ու գիրը հասկանալ և սիրելի է հավերժորեն։

Գնահատման չափանիշներ

9-րդ դասարան

1 հարց՝

ենթահարցեր՝	1-3 մ.,	2-1 մ.,	3-3 մ.,	4-3 մ.,		

2 հարց՝

ենթահարցեր՝	1-2 մ.,	2-1 մ.,	3-2 մ.,	4-5 մ.,		

3 հարց՝

ենթահարցեր՝	1-1 մ.,	2-1 մ.,	3-1 մ.,	4-1 մ.,	5-1 մ.,	6-5 մ.

4 հարց՝

ենթահարցեր՝	1-2 մ.,	2-2 մ.,	3-1 մ.,	4-1 մ.,	5-2 մ.,	6-2 մ.

Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝ Ս.Աբազյան